

No. 55931*

**Luxembourg
and
Armenia**

Agreement between the Government of the Grand Duchy of Luxembourg and the Government of the Republic of Armenia on air services (with annex). Luxembourg, 8 December 2015

Entry into force: *1 June 2019, in accordance with article 25*

Authentic texts: *Armenian, English and French*

Registration with the Secretariat of the United Nations: *Luxembourg, 6 September 2019*

**No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.*

**Luxembourg
et
Arménie**

Accord entre le Gouvernement du Grand-Duché de Luxembourg et le Gouvernement de la République d'Arménie relatif à des services aériens (avec annexe). Luxembourg, 8 décembre 2015

Entrée en vigueur : *1^{er} juin 2019, conformément à l'article 25*

Textes authentiques : *arménien, anglais et français*

Enregistrement auprès du Secrétariat de l'Organisation des Nations Unies : *Luxembourg, 6 septembre 2019*

**Aucun numéro de volume n'a encore été attribué à ce dossier. Les textes disponibles qui sont reproduits ci-dessous sont les textes originaux de l'accord ou de l'action tels que soumis pour enregistrement. Par souci de clarté, leurs pages ont été numérotées. Les traductions qui accompagnent ces textes ne sont pas définitives et sont fournies uniquement à titre d'information.*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՈՐՎԱԾ 1	Մահմանումներ
ՀՈՐՎԱԾ 2	Իրավունքների Տրամադրում
ՀՈՐՎԱԾ 3	Նշանակում և Լիազորում
ՀՈՐՎԱԾ 4	Շահագործման Լիազորության Հետևանքում, Ուժը Կորցրած Ճանաչումը, Գանեցումը և Մահմանափակումը Օրենքների և Գանուակարգերի Կիրառում
ՀՈՐՎԱԾ 5	Վկայականների և Լիցենզիաների Ճանաչում
ՀՈՐՎԱԾ 6	Թոյչքային Անվտանգություն
ՀՈՐՎԱԾ 7	Ավիացիոն Անվտանգություն
ՀՈՐՎԱԾ 8	Մաքսատուրքերից և Այլ Հարկերից Ազատում
ՀՈՐՎԱԾ 9	Արդար Մրցակցություն և Պետական Աջակցություն
ՀՈՐՎԱԾ 10	Սակագներ
ՀՈՐՎԱԾ 11	Առևտրային Գործունեություն
ՀՈՐՎԱԾ 12	Զուտ Եկամուտների Փոխարկում և Փոխանցում
ՀՈՐՎԱԾ 13	Համագործակցային Համաձայնագրեր
ՀՈՐՎԱԾ 14	Վերգեռնյա Մպասարկում
ՀՈՐՎԱԾ 15	Համակցված Հաղորդակցություն
ՀՈՐՎԱԾ 16	Գանձումներ Սպառողներից
ՀՈՐՎԱԾ 17	Վիճակագրության Տրամադրում
ՀՈՐՎԱԾ 18	Խորհրդակցություններ
ՀՈՐՎԱԾ 19	Տարաձայնությունների Կարգավորում
ՀՈՐՎԱԾ 20	Փոփոխություններ
ՀՈՐՎԱԾ 21	Բազմակողմ Կոնվենցիա
ՀՈՐՎԱԾ 22	Դադարեցում
ՀՈՐՎԱԾ 23	Գրանցում
ՀՈՐՎԱԾ 24	Ուժի մեջ մտնելը
ՀՈՐՎԱԾ 25	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ

ԼՅՈՒՔՄԵՄԲՐՈՒՐԳԻ ԴՔՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Լինելով «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Կոնվենցիայի կողմեր, որը Չիկագոյում ստորագրման համար բաց է 1944թ. դեկտեմբերի 7-ից,

Ցանկանալով կազմել Համաձայնագիր իրենց համապատասխան տարածքների միջև և այդ տարածքներից դուրս օդային հաղորդակցությունների հաստատման նպատակով, Ցանկանալով երաշխավորել միջազգային օդային հաղորդակցությունների ոլորտում թոփաքային և ավիացիոն անվտանգության բարձր մակարդակ,

համաձայնվեցին հետևյալի շուրջ.

**ՀՈՂՎԱԾ 1
ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

Սույն Համաձայնագրի շրջանակներում, եթե Համաձայնագրի տեքստում այլ մեկնաբանություն չի տրվում.

ա. «Ավիացիոն իշխանություններ» հասկացությունը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության դեպքում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը և ՀՀ Կառավարությանն առնթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը և Լյուքսեմբուրգի Դքսության կառավարության դեպքում՝ Քաղաքացիական ավիացիայի ոլորտի պատասխանատու նախարար, կամ երկու դեպքում էլ՝ ցանկացած իշխանություն կամ անձ՝ լիազորված կատարելու վերը նշված իշխանությունների կողմից ներկայումս իրականացվող գործառնությունները,

բ. «Համաձայնեցված հաղորդակցություններ» հասկացությունը նշանակում է կանոնավոր օդային հաղորդակցություններ, որոնք իրականացվում են սույն Համաձայնագրի Հավելվածով սահմանված երթուղիներով ուղեբեռների, բեռների, ներառյալ՝ փոստի, առանձին կամ համակցված փոխադրման համար,

գ. «Համաձայնագիր» հասկացությունը նշանակում է սույն Համաձայնագիրը, դրա Հավելվածը և դրա ցանկացած փոփոխություն,

դ. «Կոնվենցիա» հասկացությունը նշանակում է «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» կոնվենցիան, որը Չիկագոյում 1944 թվականի դեկտեմբերի 7-ից բաց է ստորագրման համար՝ ներառյալ վերջինիս ցանկացած Հավելված, որն ընդունվել է կոնվենցիայի 90-րդ հոդվածի համաձայն, ինչպես նաև Հավելվածի կամ Կոնվենցիայի ցանկացած փոփոխություն, որը կատարվել է Կոնվենցիայի 90 և 94 Հոդվածների համաձայն՝ այնքանով, որքանով այդ Հավելվածները և փոփոխությունները ընդունելի և կիրառելի են երկու Պայմանավորվող կողմերի համար,

ե. «Նշանակված ավիաընկերություն» հասկացությունը նշանակում է սույն Համաձայնագրի 3-րդ Հոդվածի համաձայն նշանակված և լիազորված ավիաընկերություն,

զ. «Սակագին» հասկացությունը նշանակում է ավիաընկերությունների, այդ թվում՝ նրանց գործակալների կողմից գանձվող յուրաքանչյուր ուղեվարձ, դրույթ, գանձում՝ ուղևորների, ուղեբեռների և/կամ բեռների (բացառությամբ փոստի) օդային փոխադրման (ներառյալ դրա հետ անմիջականորեն կապված այլ տեսակի փոխադրման) դիմաց և այն պայմանները, որոնց ներքո այդ ուղեվարձերը, դրույթները, գանձումները կիրառվում են,

է. «Օդային հաղորդակցություն», «Միջազգային օդային հաղորդակցություն», «Ավիաընկերություն» և «Վայրէջք ոչ առևտրային նպատակներով» հասկացություններն ունեն Կոնվենցիայի 96-րդ Հոդվածով դրանց ամրագրված նշանակությունը,

ը. «Տարածք» հասկացությունն ունի Կոնվենցիայի 2-րդ Հոդվածով դրան ամրագրված նշանակությունը:

ՀՈԴՎԱԾ 2

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՐԱՍՍԴՐՈՒՄ

1. Նշանակված ավիաընկերությունների կողմից միջազգային օդային հաղորդակցությունների իրականացման հետ կապված՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին վերապահում է հետևյալ իրավունքները.

ա. իր պետության տարածքի վրայով առանց վայրէջքի թռիչք կատարելու իրավունք,

բ. իր պետության տարածքում կանգառել ոչ առևտրային նպատակներով,

գ. սույն Համաձայնագրի Հավելվածով սահմանված կետում (կետերում) վայրէջք(ներ) կատարելու իրավունք՝ ուղևորների, ուղեբեռի, բեռի, ներառյալ՝ փոստը, առանձին կամ համակցված, օդանավ վերցնելու և օդանավից իջեցնելու նպատակով,

դ. սույն Համաձայնագրով սահմանված այլ իրավունքներ:

2. Սույն Հոդվածի առաջին մասի որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի որպես մի Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերություններին՝ մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում վճարմամբ կամ վարձակալմամբ ուղևորներ, ուղեբեռ և բեռ՝ ներառյալ փոստը, առանձին կամ համակցված օդանավ վերցնելու իրավունքի տրամադրում՝ մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում մեկ այլ կետ փոխադրելու նպատակով: